№ 240 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3 — 1904 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3 № 240

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թերթերուս գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Թիֆլիս, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Redaction „Mschak".
Տէլէֆոն № 25.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասարակական մտածողութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Մի սպանութեան առիթով. Հայոց ներկայացուցիչները Բագուում. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Անգլիացիները Պարսկական ծոցում. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Շօվինիզմի պըտուղները։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ

—

Երէկվայ մեր յօդուածում մենք յայտնեցինք, որ մենք մեծ նշանակութիւն ենք տալիս մեր երկրի խոշոր ոյժերի գործակցութեան մեր կարիքները ուսումնասիրելու և քննելու համար։ Այդ գործակցութիւնը կարևոր է, որպէս զի ժողովրդական կեանքում, ամէն մի էական արտայայտութիւն, որ կարող է նպաստել նրա առաջադիմութեան, դառնալով հրապարակական մտածողութեան և քննութեան նիւթ, արդիւնաբերէ կարելին չափ շատ բարիքներ երկրի համար։

Որքան ստուար է մի երկրի, մի ժողովրդի մտածող դասը, այնքան աւելի ամուր, հաստատ և բազդրեալ է նրա առաջադիմութիւնը։ Մեր երկրում միայն անցեալ տասնվեցներորդ դարի երկրորդ կէսում ակսեցին երևալ քննադատական ոգով գործողներ և հասարակական շահերի մասին մտածողներ։ Նրանց թիւը սկզբում շատ սահմանափակ էր, ուստի և եղած ոյժերն էլ անկարող էին մեծ դեր կատարել կեանքի մէջ, լինելով չափազանց անջատված և կղզիացած ուրիշներից։ Եւ քանի մեծանում և ընդարձակվում էր մտածող ոյժերի թիւը, այնքան աւելի ու աւելի ակսում էր զգացվել բարեփոխութիւնների պահանջը կեանքի մէջ։

Այժմ մեծ քաղաքներում մենք ունենք որոշ չափով մտաւոր ոյժեր, որոնց շնորհիւ և աջակցվում է իրագործել հասարակական ձեռնարկութիւններ։ Իսկ փոքր քաղաքներում և մանաւանդ գիւղերում դեռ շատ սահմանափակ է ներգործական ուղեղների թիւը։ Եւ եթէ մեր գաւառը թոյլ է բարոյապէս և նոյն իսկ նիւթապէս, դրա գլխաւոր պատճառներից մէկը մտաւոր ոյժերի բացակայութիւնն է։ Ամերիկայի գիտնականներից մէկը մի դասախօսութեան մէջ, դիմելով երկրագործներին, ասում է. «Եթէ դուք ցանկանում էք լաւ հերկված և մշակված տեսնել ձեր արտերը, հերկեցէք և մշակեցէք նախապէս ձեր ուղեղները»։ Եւ դասախօսը պատմութիւնից լաւ գիտէր, որ այն ազգերը, որոնք հոգս են տարել կարգին մշակելու և զարգացնելու մարդկանց ուղեղները, նրանք զրանով մեծապէս նպաստել են իրանց ազգաբնակութեան ոչ միայն բարոյական, այլ և նիւթական զարգացմանը։

Որքան ուժեղ լինի հասարակական մտածողութիւնը, այնքան ուժեղ կը լինի և ժողովուրդը, այնքան բարգաւաճ կը լինի երկիրը։

Մենք ամրիներ շարունակ աշխատել ենք նպաստել հասարակական մտածողութեան զարգացման և բոլոր հոգով կը ցանկանայինք, որ մեր երկրի մէջ ցրված մտաւոր ոյժերը իրանց գործակցութեամբ հնարաւորութիւն տային աւելի ևս մեծ ծաւալով իրագործելու այդ գաղափարը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Չէ կարելի ասել թէ մենք մի անգամվայ անտարբեր ու անզգայ ենք դէպի մեր պակասութիւնները, մանաւանդ չէ կարելի ասել, որ չենք մտածում ամէն կերպ մեզ երջանկացնելու համար։ Հէնց միայն այն, որ մենք ամէն օր խառնում-խառնշտրում ենք մեր ազգագրութիւնը, հէնց միայն այն, որ իւրաքանչիւրը սրբագրող մեզանում գիտութիւնների մի ամբողջ ակադեմիա է հանդիսանում և իր սեփական կանոններն է օրէնսդրում մեր ուղղագրական քաոսը աւելի զարհուրելի դարձնելու համար,—գիտէք ինչ մեծ հոգատարութեան նշան է։ Մենք անպատճառ երջանիկներից երջանիկը կը դառնանք՝ այսպէս շարունակելով։ Բայց, ի հարկէ, մեզ հօ տառերով չենք շինելու մեր անհուն երջանկութիւնը։ Տառերից կանցնենք բառերին, կը գտնենք, որ ազգային դժբախտութիւնների բուն պատճառը մեր բառերն են ու կը սկսենք... բայց առայժմ յայտնի չէ թէ ինչ կը սկսենք։ Առ այժմ միայն մեր բառերի պոչից բռնել ենք սկսում։ Այսպէս, Լոնդոնի «Պատանի» թերթիկը, մի խեղճ ու կրակ երեխայական հրատարակութիւն, արդէն այ՛քան խիստութիւն է ձեռք բերել, որ գտել ու հրապարակ է քաշել մեր ազգ ցին խոշոր պակասութիւններից մէկը, զուցէ և—ի՞նչ իմանաս—ամենազլխաւորը։ Դա այն է, որ հայերը չեն կարողանում... շնորհակալութիւն արտայայտել։ Շնորհակալութեան զգացմունքից մեզ չէ զրկել երկինքը, բայց լեզու չունենք նրան արտայայտելու համար—ահա ինչ է մեր ազգային... դժբաղդութիւնը։ «Պատանին» ասում է։

Շատ օտարազգիք մեր ցեղային նկարագիրը սխալ ընկրնելով, հայը ապերախտ հրդեհակած են։ Եթէ անոնց առաջ բերած օրինակներէն շատերը քննուին, պիտի գտնուին որ ապերախտութիւն չիկայ հոն, այլ պակասածը՝ զգացման արտայայտութիւնն է։ Եղած ո և է քարիք մը սիրով ու երախտագիտութեամբ վերնդունինք և խորապէս կը զգածուինք, սակայն զայդ յայտնել, բառերով բացատրել, և ուրիշներու հաղորդելու մէջ կը թերանանք։

Դ՝ դիր՝ ցիր այս կէտին մէջ ամէն ազգերէն առաջ անցած են։ Ո և է փոքրիկ բարիք մը, սիրելի գործ մը, շարժում կամ ակնարկութիւն մը՝ շնորհակալութեան հեղեղ կը փրցնէ ընդունողին բերնէն և իր զգացումը յայտնող բառերը կը հիւսուին գեղեցիկ պսակ մը յօրինելու բարեբարին ճակատին։ Երբեմն այս բառերու հեղեղը այնչափ հեռուները կերթան, որ զգացածը յայտնելէն զատ, չը զգացածն ալ կը յայտնեն։

Անգլիացիք այդչափ յառաջ չեն երթար, և գաղղիացիները կը մեղադրեն ըսելով թէ «անոնց սիրտը իրենց լեզուին վրան է»։

Ասկէ շատ տարբեր է մերը, մենք կը զգանք և կը գնահատենք, բայց զգացումնիս չենք արտայայտեր, շատ շատ ծիծաղով մը կամ ժպիտով մը կարտայայտենք, ու կը լռենք։

Եւ եթէ կայ այս դժբաղդութիւնը, նշանակում է, որ մենք պիտի ունենանք որ և է օրգանական պակասութիւն։ Հօ էլի տնաքանդութիւնը լեզուի մէջ չէ։ «Պատանին» մատը դնում է այդ պատճառի վրա։

Կարելի է ասոր պատճառներէն մէկն ալ մեր լեզուին մէջը փնտռելու է։ Մեր բառերը դժբաղդաբար շատ երկայն են, մանաւանդ շնորհակալ եմ բառը այնչափ երկայն է, որ մարդ արտասանելէն առաջ քանի մը անգամ կը չափէ կը ձևէ և այնպէս կը ձեռնարկէ ըսելու։

Ի՜նչ անճար գրութիւն։ Զորս վանկ արտասանելն էլ հայի համար մի կատարեալ տանջանք է. իր մայրենի լեզուով մի խօսք արտասանելու համար նա դեռ «քանի մը անգամ» պիտի չափէ ու ձևէ, յետոյ միայն պատրաստութիւններ տեսնէ այդ խօսքը ասելու։ Եւ որովհետև այդ տանջանքները հեշտ է միայն նկարագրել, իսկ տանել միանգամայն անկարելի է, ուստի խեղճ հայը մնում է պապանձված և զուր տեղից օտարազգիներից «ապերախտ» անունն է ստանում։ Այ եթէ հայն էլ ֆրանսիացու նման կարողանար մի հատ «մերսի» ասելով օձիք ազատել, այն ժամանակ բոլորովին ուրիշ կը լինէր նրա պատմականն և միջազգային դրութիւնը։ Երկար են մեր բառերը, մենք միավանկ, երկվանկ բառերն ենք գործածում։ Ինչ որ մի բարիք մը, սիրելի գործ մը, շարժում կամ ակնարկութիւն մը՝ շնորհակալութեան հեղեղ կը փրցնէ ընդունողին բերնէն և իր զգացումը յայտնող բառերը կը հիւսուին գեղեցիկ պսակ մը յօրինելու բարեբարին ճակատին։ Երբեմն այս բառերու հեղեղը այնչափ հեռուները կերթան, որ զգացածը յայտնելէն զատ, չը զգացածն ալ կը յայտնեն։

Անգլիացիք այդչափ յառաջ չեն երթար, և գաղղիացիները կը մեղադրեն ըսելով թէ «անոնց սիրտը իրենց լեզուին վրան է»։

Ասկէ շատ տարբեր է մերը, մենք կը զգանք և կը գնահատենք, բայց զգացումնիս չենք արտայայտեր, շատ շատ ծիծաղով մը կամ ժպիտով մը կարտայայտենք, ու կը լռենք։

Եւ եթէ կայ այս դժբաղդութիւնը, նշանակում է, որ մենք պիտի ունենանք որ և է օրգանական պակասութիւն։ Հօ էլի տնաքանդութիւնը լեզուի մէջ չէ։ «Պատանին» մատը դնում է այդ պատճառի վրա։

Կարելի է ասոր պատճառներէն մէկն ալ մեր լեզուին մէջը փնտռելու է։ Մեր բառերը դժբաղդաբար շատ երկայն են, մանաւանդ շնորհակալ եմ բառը այնչափ երկայն է, որ մարդ արտասանելէն առաջ քանի մը անգամ կը չափէ կը ձևէ և այնպէս կը ձեռնարկէ ըսելու։

Ի՜նչ անճար գրութիւն։ Զորս վանկ արտասանելն էլ հայի համար մի կատարեալ տանջանք է. իր մայրենի լեզուով մի խօսք արտասանելու համար նա դեռ «քանի մը անգամ» պիտի չափէ ու ձևէ, յետոյ միայն պատրաստութիւններ տեսնէ այդ խօսքը ասելու։ Եւ որովհետև այդ տանջանքները հեշտ է միայն նկարագրել, իսկ տանել միանգամայն անկարելի է, ուստի խեղճ հայը մնում է պապանձված և զուր տեղից օտարազգիներից «ապերախտ» անունն է ստանում։ Այ եթէ հայն էլ ֆրանսիացու նման կարողանար մի հատ «մերսի» ասելով օձիք ազատել, այն ժամանակ բոլորովին ուրիշ կը լինէր նրա պատմականն և միջազգային դրութիւնը։ Երկար են մեր բառերը, մենք միավանկ, երկվանկ բառերն ենք գործածում։ Ինչ որ մի բարիք մը, սիրելի գործ մը, շարժում կամ ակնարկութիւն մը՝ շնորհակալութեան հեղեղ կը փրցնէ ընդունողին բերնէն և իր զգացումը յայտնող բառերը կը հիւսուին գեղեցիկ պսակ մը յօրինելու բարեբարին ճակատին։ Երբեմն այս բառերու հեղեղը այնչափ հեռուները կերթան, որ զգացածը յայտնելէն զատ, չը զգացածն ալ կը յայտնեն։

Անգլիացիք այդչափ յառաջ չեն երթար, և գաղղիացիները կը մեղադրեն ըսելով թէ «անոնց սիրտը իրենց լեզուին վրան է»։

Ասկէ շատ տարբեր է մերը, մենք կը զգանք և կը գնահատենք, բայց զգացումնիս չենք արտայայտեր, շատ շատ ծիծաղով մը կամ ժպիտով մը կարտայայտենք, ու կը լռենք։

Եւ եթէ կայ այս դժբաղդութիւնը, նշանակում է, որ մենք պիտի ունենանք որ և է օրգանական պակասութիւն։ Հօ էլի տնաքանդութիւնը լեզուի մէջ չէ։ «Պատանին» մատը դնում է այդ պատճառի վրա։

Կարելի է ասոր պատճառներէն մէկն ալ մեր լեզուին մէջը փնտռելու է։ Մեր բառերը դժբաղդաբար շատ երկայն են, մանաւանդ շնորհակալ եմ բառը այնչափ երկայն է, որ մարդ արտասանելէն առաջ քանի մը անգամ կը չափէ կը ձևէ և այնպէս կը ձեռնարկէ ըսելու։

Ի՜նչ անճար գրութիւն։ Զորս վանկ արտասանելն էլ հայի համար մի կատարեալ տանջանք է. իր մայրենի լեզուով մի խօսք արտասանելու համար նա դեռ «քանի մը անգամ» պիտի չափէ ու ձևէ, յետոյ միայն պատրաստութիւններ տեսնէ այդ խօսքը ասելու։ Եւ որովհետև այդ տանջանքները հեշտ է միայն նկարագրել, իսկ տանել միանգամայն անկարելի է, ուստի խեղճ հայը մնում է պապանձված և զուր տեղից օտարազգիներից «ապերախտ» անունն է ստանում։ Այ եթէ հայն էլ ֆրանսիացու նման կարողանար մի հատ «մերսի» ասելով օձիք ազատել, այն ժամանակ բոլորովին ուրիշ կը լինէր նրա պատմականն և միջազգային դրութիւնը։ Երկար են մեր բառերը, մենք միավանկ, երկվանկ բա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇՕՎԻՆԻԶՄԻ ՊՏՈՒՂՆԵՐԸ

—

Կատարվեց։

Բիսմարկի հայրենակիցների համագերմանական ձգտումները ցոյց տուին իրանց առաջները։

Աւստրիայում մինչև այժմ գերմանները զինված էին սլաւոնական ցեղերի դէմ։ Նրանց հանդիսա չէին տալիս յատկապէս չէխերը։

Իսկ այժմ նրանց զոհ են գնում իտալացիները։

Դա կեղտոտ, յարձակողական նացիոնալիզմի արդիւնքն է։ Դրա անունն է շովինիզմ։

Դրա փայլուն ներկայացուցիչներն էին Ֆրանսիայում կիսադօնքիշօտ Դէրուլէդը, հողմաղաց Դէրէնը, Շաբրոլ փողոցի տիրահոչակ հերոսը։

Զափազանց սայթաքուն և թեք մակերդակ է ներկայացնում շովինիզմը։ Հայերս նրան տուել ենք «թթու ազգասիրութիւն» կամ «ազգամոլութիւն» նշանակութեան անունը։

Նա զինում է մի ազգ միւսի դէմ։

Նա զինում է նոյն երկրի զաւակներին իրար դէմ։

Նոյն իսկ մի և նոյն ազգի մի մասը նա ոտի է հանում միւսի, իր արիւնակից եղբօր դէմ։

Կարճ և համառօտ է նրա քարոզը. ամենայն ինչ որ իմն է, սուրբ է, մաքուր, անթերի։ Իսկ օտարի ամէն բանը զզուելի, պակասաւոր, դժոխային է։

Նրա ցանած որոմը քիչ է, բայց զօրեղ։

Հալածել օտարից բղխած, նրանից եկած ամէն ինչ—լաւ թէ վատ, այդ մի և նոյնն է։

Խեղդել մի և նոյն երկրում ապրող բոլոր հարևանների լեզուն, գրականութիւնը, ազգային սովորութիւնները, նոյն իսկ կրօնը։

Զգտել բոլորին վերածել միօրինակութեան, վերածել մի և նոյն ազգութեան։

Իսկ այդ ազգութիւնը անպատճառ իրն է լինելու։

Նացիոնալիզմը կամ թթու ազգասիրութիւնը յարձակողական, ագրեսիվ է։

Նա ամենևին կապ չունի այն գաղափարի հետ, որ արտայայտում է հայերիս մէջ «ազգասէր» բառը։

«Ազգասէր» բառին համապատասխանող խօսք չը կայ ոչ ռուսերէնում, ոչ ֆրանսերէնում և ոչ էլ գերմաներէնում։

«Ազգասէրը» մի և նոյն «պատրիոտն» է կամ հայրենասէրը։

Նա ծնունդ է «քաղաքական հայրենիք» չունեցող ժողովուրդների։ Այդ բառն ստեղծել են հրէական և հայկական դիասպօրաները, որոնք օտար հողի վրա լինելով, հայրենիքից դուրս, ուզեցել են ցոյց տալ իրանց իսկապէս պատմական սէրը դէպի մայր-հայրենիքը, դէպի դիասպօրան դուրս վանող մէտրոպոլը։

—

Թիւրքիայի անունը Նիկոլա I կայսրը կնքել է «Հիւանդ Մարդ»։

Բայց Թիւրքիայից յետոյ՝ սահմանադրական Եւրոպայում ամենից աւելի «Հիւանդ Մարդը» Աւստրիական կայսրութիւնն է։

Բազմաթիւ մանր ու խոշոր ազգութիւններ բնակվում են նրա նեղ սահմաններում։ Չը կայ նրանում ոչ մի տարր, որ թուական բացարձակ գերիշխանութիւն կազմէ։

Ունգարիան կանգնած է Աւստրիայի դէմ։

Թողնենք մի կողմ Մաջարներին և քննենք Աւստրիան։

Այդ երկրի 25 միլիոն ազգաբնակութեան 14 միլիոնն սլաւոն ազգեր են, 9 միլիոնը գերմաններ և 2 միլիոնն իտալացիներ և ուրիշ ազգեր։

Ա՜յդքան բազմազան ազգութիւնների մէջ 9 միլիոն գերմանները, վարակված բիսմարկեան շովինիզմով, ուզում են բոլորին ճնշել, բոլորին վերածել գերմանիզմի։

Բերլինից գուրս ցայտող պանգերմանական պրոպագանդը վարակել է այդ 9 միլիոն ազգաբնակութեանը։

Աւստրիայում գերմանական նացիոնալիզմն ու շովինիզմը չափ ու սահման չունեն։

14 միլիոն սլաւոնների 9 միլիոն գերմաններն ուզում են ճնշել իրանց միջնադարեան իրաւունքներովը։ Նրանք ուզում են խեղդել չէխերի ազգային ինքնուրոյնութիւնը։

Նոյն այդ գերմանական շովինիզը, չը բաւականանալով սլաւոններով, վաղուց աչքը տնկել է Ադրիատիական ծովի և հարաւային Տիրոլի սակաւաթիւ իտալացիների վրա։

—

Վերջապէս պայթեց։

Հիւանդ Աւստրիայում գերմանական շովինիզմի տածած ատելութիւնը, նրա ցանած որոմի թոյնը արտայայտվեց։

Մեր ընթերցողներին յայտնի է, որ Աւստրիայի իտալական ազգաբնակութիւնը վաղուց ուզում էր ունենալ իր՝—իտալական համալսարանը Տրիէստում։ Նրան այնտեղ, իր սեփական երկրում թոյլ չը տուին բացանելու իր սեփական համալսարանը, այլ առաջարկեցին բանալ այս տարվայ սեպտեմբերին Ինսբրուկում մի նոր «իտալական ֆակուլտէտ»։

Սակաւաթիւ են իտալացիներն Աւստրիայում, ընդամենը 800,000 հոգի, բայց նրանք կուլ չեն գնում պանգերմանիզմին, որովհետև նրանց կողքին կայ մի անկախ հայրենիք, որ նրանց մէջ մշտապէս վառ է պահում ազգային ինքնուրոյնութիւնը և ապագայի յոյսերը։

Նոյնը չէ՞ միթէ և է դասի ու Լօթարինգիայի դրութիւնը։

Ինսբրուկի իտալական ֆակուլտէտը եղաւ գերմանական տարրի «աչքի փուշը»։

Շովինիզմը խօսեց։ Հոկտեմբերի 21-ին գերմանացիներն Ինսբրուկում յարձակվեցին մի հիւրանոցում հաւաքված 80—100 իտալացի ուսանողների վրա, որոնք հաւաքվել էին տօնելու իրանց ազգային այդ փոքրիկ յաղթանակը, Ինսբրուկի իտալական ֆակուլտէտի բացումը։

Պանգերմանիզմի ֆանատիկոս զինուորները թափվում են այդ հիւրանոցի վրա, ջարդ ու փշուր անում նրանում եղած բոլոր կահ-կարասիները և սկսում ծեծել իտալացի ուսանողներին։

Իտալիայում ամէն մարդ սի քիչ Գարիբալդի է... կովկասցիներիս նման շուտ բռնկվող, տաքարիւն են իտալացիները։ Հանելով ատրճանակները, իտալացի ուսանողները վիրաւորում և սպանում են 9 հոգի։

Եռապետական դաշնակցութեան անդամ Իտալիայի Ինսբրուկ քաղաքում նստող հիւպատոսի բնակարանը շրջապատել են կառավարական զօրքերը, որպէս զի ազատ պահեն նրան շովինիզմով էլեքտրացած գերման ամբոխի խելագար քայլերից։

Աւստրիական հիւանդ պարլամէնտը նորից ադմուկի ասպարէզ պէտք է դառնայ։ Եթէ մինչև այժմ օբստրուկցիայի կամ խանգարիչ տակտիքայի հետևում էին ճնշված չէխերը, այժմ նրանց հետ կը միանան և իտալացիները։

Որքան կը տևէ արդեօք հիւանդ Աւստրիայի այս անբնական, ցաւագար կեանքը՝ մենք չենք կարող գուշակել։

Բայց դրականապէս կարող ենք պնդել, որ այդ պետութիւնը կանգնած է բայքայման ուղիի վրա։

Մէկ կողմից յարձակողական, շովինիստ պանգերմանիզմը, Բերլինում, Բիսմարկի գերեզմանից սնվող համագերմանական ցնորքները, միւս կողմից իսկապէս առողջ ու արդար, ապագայ ունեցող ազգայնական վերածնութիւնն իրար դէմ են կանգնած։

Որքան աճէ ու բազմանայ պանգերմանական քարոզն ու տարածութիւնը, այնքան աւելի Աւստրիան կը թուլանայ, այնքան աւելի կը մօտենայ նրանում ապրող մանր ազգութիւնների ինքնուրոյնութեան օրէնքը։

Խաժակ

ռեր չունենք, ֆրանսիացին, անգլիացին, և ոչ մի հատ երկար բառ ունեն։ Եկէք, ուրեմն, կրճատենք մեր բառերը, մի մի հատ վանկերի վերածենք։ Օրինակ, «շնորհակալ» շատ է անտանելի, տանջող երկար, մենք շինենք «շնորհ». Ինչքան գեղեցիկ կը լինի և մի և նոյն ժամանակ որքան անհուն բարիքներ կը ստանանք մենք։ Կարելի է անվերջ այսպիսի օրինակներ բերել։ Բայց արժէ՞ այստեղ։

Եւ չասէք թէ չը պէտք էր ուշադրութիւն դարձնել մի «Պատանի» դատողութիւնների վրա։ Մի՞թէ ամիսը մի անգամ հրատարակվող այդ թերթիկը բացառութիւն է կազմում իր այս յօդուածով։ Ո՛չ։ Նա միայն մի փոքրիկ կտոր է մեր իրականութիւնից։ Նա մէկն է մեր լեզուի բէֆօրմատօրնօրից։ Երևոյթը ընդհանուր է մեզանում.—ծռմռել, տակն ու վրա անել ամեն ինչ, քաոս ու տարտարոս ստեղծել—սա կայ ամեն մի քայլում, երևում է ամեն օր։ Մենք այդ երևոյթի մէջ տեսնում ենք խոլիս հին ազգային հոգեբանութիւնը։ Հայը միշտ չէ կարողացել հաշտվել իր լեզուի հետ։ Նա միշտ արհամարհել է իր այդ միակ ստացուածքը, որ նրան մի որոշ ազգագրական կերպարանք է հաղորդում։ Մի ժամանակ նա Լեռատանում թաթարերէնն էր ստացնում իր ընտանիքի և եղեցցու մէջ, որովհետև, երևի, նոյնպէս գտնում էր, որ անհարին տանջանք է մի «շնորհակալ» արտասանելը։ Մի և նոյնը և այսօր։ Ընդունակութիւն չունենք մեր լեզուն սովորելու, կարգին մշակելու, հարստացնելու և յանուն ինչ որ ազգային բարիքների, ասեն օր բառնում, տակն ու վրա ենք անում նրան։ Եթէ չենք հասել արդէն, շուտով հասած կը լինենք այն դրութեան, որ հայերէն սովորել կամեցող մէկը կը զարհուրէ այն քաօսից, որ տիրում է իւրաքանչիւր գրքի, իւրաքանչիւր թերթի սէջ ու կը փախչէ իր մտքից։ Իսկ մենք չէ՞ որ հեշտութեան, գեղեցկութեան, հարստութեան և այլ այսպիսի բառների անունից ենք կատարում մեր ամենօրեայ վարժութիւնները մեր լեզուային աշտարակաշինութեան մէջ...

*

Պետերբուրգում մեռաւ «Нива» տարածված շաբաթաթերթի հրատարակիչ Մարքսը։ Նա Գերմանիայից եկաւ Ռուսաստան հասարակ գործակատարի պաշտօնով, ռուսերէն չը գիտէր, բայց այսօր լոկ հրատարակչութեամբ թողնում է իր ժառանգներին 6½ միլիոնի կարողութիւն։ Այդ դեռ նուիթական հարստութիւն է։ Իսկ ի՞նչ անուն թողց նա։ Յայտնի ֆելիֆէտօնիստ Իսրայելվիչ գրում է «Русское Слово» լրագրի մէջ.

Մարքսին Ռուսաստանը, իսկ որ, շատ բան է պարտական։ Եւ Մարքսը Ռուսաստանի համար աւելի մեն դեր է կատարել, քան լուսաւորութեան մի մինիստր։

Ասք կար նոյն իսկ որ դիտութիւնների Ակադեմիան մի որ և է նշանով պատուէ Մարքսի հրատարակչական գործունէութիւնը։ Ահա մի օրինակ։ Ճիշտ է, նա մի հատ է և Ռուսաստանի պէս մի մեծ երկրում, բայց ոչ ոք չէ ասում, որ նրան պէտք է ընդօրինակել ամբողջովին, իր բոլոր ձեռնարկութեան չափերով։ Աւելի փոքրիկ, բայց յարատև գործերով էլ կարելի է միևնոյն պատուին ու անուան արժանանալ։ Մեր փողատէրերը արհամարհում են հրատարակչական գործը։ Թող նայեն այդ օրինակին...

ՄԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Անշուշտ ընթերցողը չէ մոռացել «Մշակի» № 231-ում Վ. Ագուլիսից ուղարկած ցաւալի հեռագիրը՝ երիտասարդ լեռնային ինժենէր Մենտոր Ներսիսեանցի սպանութեան մասին։ Երիտասարդը ընդամենը 26 տարեկան էր և միայն անցեալ տարի աւարտելով Գերմանիայում, Ցրայբերգի լեռնային ինստիտուտում, ստացած գիտութիւնը գործադրել յօգուտ հայրենի երկրի լեռնային և ազգաբնակութեան տնտեսական գործի զարգացման։

Լինելով ունեոր ծնողների զաւակ և հնարաւորութիւն ունենալով ընկերական ոյժով հանքային գործ ստեղծել հայկական կենտրոններից մէկում, նա հէնց այդ նպատակով էլ երկու ամիս առաջ գնացել էր Զանգեզուրի հանքատեղերից մէկի հանքը նայելու և ապա, եթէ հնարաւոր է, իրագործելու իր մտադրութիւնը։ Սակայն ընտանեկան հանգամանքների պատճառով, անկարող լինելով այնտեղ երկար մնալ, գնում է գիւղը կարճ ժամանակից յետոյ վերադառնալու պայմանով։ Բայց աւաղ, այլ է կարգադրված լինում երիտասարդի բաղդը։ Անգութ չարագործը, առանց որ և է պատճառի հանգուցեալի կողմից, վերջ է դնում ոչ միայն նրա ծաղիկ հասակին, այլ և նրա շատ օգտաւէտ ծրագիրներին։ Սպանութիւնը կատարել է մարդասպանը հէնց նրա համար, թէ ինչու ազուլեցիները նրան, Ֆարատին, իբրև աւազակի փող չեն տալիս քէֆիր անելու նրանց հաշուով։ Դէհ, որ այդպէս է, ես էլ իմ ասածս կանեմ և կանեմ մի այնպիսի բան, որից ամբողջ Ագուլիսը կը դղրդայ։ Եւ ահա ամբողջ ագուլեցիների վրէժը լուծում է մի նորաբողբոջ, բոլորովին անմեղ երիտասարդի։

Սակայն մի հարց։ Ո՞վ է մեղաւոր ներկայ ցաւալի դէպքում. ո՞վ է պատասխանատու երիտասարդի մահվան։

Այս հարցին, իմ կարծիքով, երկու տեսակ պատասխան չէ կարող լինել. յանցաւոր է հասարակութիւնը, որ հնարաւորութիւն ունէր դժբաղդութեան առաջն առնելու, բայց չարաւ։ Եւ ահա այսօր հանգուցեալ երիտասարդ Մենտորի հոգին է, որ իր թարմ շիրիմի խորքերից բողոքում է ձեր, ագուլեցիներիդ դէմ, բողոքում է ձեր յանցաւոր անտարբերութեան դէմ։

Արդարանալու և ոչ մի ճանապարհ։ Հասարակութիւնը լաւ էր ճանաչում ներկայ մարդասպանի ընտանիքը, որը միայն մարդասպաններ է տուել։ Վերջապէս նա, հասարակութիւնը, լաւ է ճանաչում իրան, մարդասպանիս. ամիսներ ապրելով նա նրանց մէջ, նրանք ականատես են եղել նրա վարած կեանքին, բռնած դիրքին, օրը ցերեկով բաղարի մէջ մարդկանց վրա զէնք բարձրացնելուն, սրանից նրանից փողեր պահանջելուն և վերջապէս լսել է վերջին դէպքի առիթով սպառնալիքներ տալու մասին. արդեօք դրանից յետոյ միջոցների դիմել է իր անձը, ունեցածը և պատիւը պաշտպանելու համար։ Նա դրական միջոցները չէ դիմել և այդ պատճառով էլ մեղաւոր է։ Նա ունէր ամեն հնարաւորութիւն իրան ապահովացնելու, սակայն անտարբեր է գտնվել։ Նա կարող էր համախոսականով ամբողջ ընտանիքը հեռացնել Ագուլիսից, կարող էր կառավարութեանը բողոքել, և եթէ մի տեղում չը լսէին, միւս տեղերում անշուշտ կը լսէին. չէ՞ որ կառավարութիւնը նրանց ամեն կերպ կաջակցէր, չէ՞ որ օրէնքը այդ թոյլ է տալիս։ Արքել են։

Այն հասարակութիւնը, որին մենք ենք ճանաչում, նա անընդունակ է այդպիսի քայլ անելու։ Նա մի ողորմելի, թոյլ, վախկոտ և անպատուասէր հասարակութիւն է, որը կարոտ է հոգաբարձուի, խնամակալի, որ պաշտպանէ նրա շահերը։ Նրա երկչոտութիւնը առասպելական է։ Քանի որ հասարակութիւնը կը լինի թոյլ, անտարբեր, վախկոտ և անվճռողական, միշտ անպակաս կը լինեն անպատուութիւնը, կողոպուտը և սպանութիւնները նրանց շրջապատող աւազակների կողմից։ Ի՞նչու չեն լսվում նոյնանման դէպքեր մեր հարևան մեղրեցիների և կարճևանցիների շրջանում։

Ահա թէ ուրից պիտի օրինակ վերցնել. իսկ քանի որ կը շարունակեն ագուլեցիները նոյնը մնալ, ինչպէս ներկայումս են, չարն էլ կը շարունակէ իր առատ հունձը տանել այսօր մէկի տնից, վաղը միւսի և այլն։ Ողորմելի՞ հասարակութիւն։ Լինել հարուստ և զարգացմամբ բարձր շրջապատողներից և այդ ամենից յետոյ էլ չը կարողանալ իր անձը և ունեցած պատիւը պաշտպանել, էլ չը գիտեմ ի՞նչու համար է ձեռք բերվում այն ժամանակ այդ բոլորը. կարելի է կրկնել բանաստեղծի խօսքերը. «Թքել եմ քու ալ փողիդ, խելքիդ ալ վրան»։

Եթէ ագուլեցին անընդունակ է որոշները ոչնչացնելու, արդեօք ի՞նչ են շինում այդ դէպքում ագուլեցի թուրքերը։ Մի՞թէ իրանց համար պատուաբեր է, որ այսպիսի ցաւալի դէպքեր են տեղի ունենում երկու դարևոր հարևանների մէջ։ Մինչև ե՞րբ մնայն լուռ հանդիսատես պիտի լինեն այսպիսի տխուր երևոյթների։ Ա՞յս է լաւ հարևանի վարձատրութիւնը։ Մի՞թէ նրանց մէջ չը կան մի քանի խելօք և դիրքով մարդիկ, որոնք կարողանային հասարակութիւնը առաջնորդել դէպի լոյս և արժատախիլ անել չարութիւնը։ Եթէ անկարելի է խօսքով և կամ այլ միջոցով իրագործել, միթէ՞ չէր կարելի համախոսականով հեռացնել առ միշտ այժմեան մարդասպանին իր ամբողջ ընտանիքով։ Չը զարմանաք, որ ասում եմ ամբողջ ընտանիքով հեռացնել, որովհետև այն սերմը, որ մարդասպանը ցանել է իր ընտանիքի մէջ, նրանք անընդունակ կը լինեն ոչնչացնել և միշտ էլ տարիներ յետոյ պիտի ՀԱՍԱՆ թուրքերին էլ, մեզ էլ։ Եթէ այդպէս վարված լինէին տարիներ առաջ դրանց ընտանիքի հետ, այսօրվայ դէպքը տեղի չէր ունենալ։ Եւ վերջապէս, ո՞ւր է թուրքերի մօլլան, հոգևոր հովիւը. ի՞նչու չէ բարձրացնում իր ձայնը յօգուտ իր հօտի։ Մի՞թէ միայն մոլեռանդութիւն տարածելում պիտի քաջ լինել։

Թող լաւ հասկանայ նա, որ այս անպատուութիւնը ոչ միայն հասարակութեան է վերաբերում, այլ և իրան։ Նա իբրև հովիւ պիտի իր ձայնը բարձրացնէր, նրան է լսում իր հօտը, նրանից է վերջինս սպասում իր փրկութիւնը. մահացու յանցանք է ականատես լինել, թէ ինչպէս են ընտանիքներ անբաղդանում, ժողովուրդը բարոյապէս փչանում ու դէպի կործանում գնում, և այդ ամենի դէմ ոչինչ չանել։ Ահա թէ ինչ պիտի լաւ ընդունէ թուրք հովիւը։

Աւետիս Դաւթեանց

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԹԱՏՐՈՆՈՒՄ

(Նամակ Բաղուից)

—

Հոկտեմբերի 29-ին, հայոց դրամատիքական խումբը ներկայացրեց Գօգոլի հռչակաւոր «Վկրաքննիչ» կօմեդիան։ Պէտք է ասած, որ այժմ այդ կօմեդիան թողնում է հանդիսականի վրա ուժեղ տպաւորութիւն միայն այն ժամանակերը, եթէ ոչ բոլոր դերակատարները, գոնէ գլխաւորները, լուրջ և տաղանդաւոր բեմական ոյժեր են հանդիսանում։ Այն ժամանակ, այո, հանդիսականի աչքի առաջ կենդանանում են Գօգոլի անմահ տիպերը։ Հակառակ դէպքում կօմեդիան շարժի տպաւորութիւն է թողնում, իսկ անմահ տիպերը մէկ մէկ չքանում են։ Այդպէս էր և հոկտեմբերի 29-ի ներկայացման ժամանակ. բացի Պետրոսեանից (քաղաքապետի դերում) և օր. Քնարիկից (Մարիա Անտոնովնա), որոնք բաւականին աջող կատարեցին իրանց դերերը, միւսները թոյլ և անկենդան էին։ Խլեստակովի դերը կատարում էր Ալիխանեան, որի ամպլուան է, ինչպէս մենք դիտել ենք, նեվրաստենիկ դերերը։ Աւելի շուտ այդ դերը պէտք էր տալ Օհանեանին, որ այդ երեկոյ խաղում էր Շպեկինի դերը ոչ այնքան էլ համապատասխան այդ դերասանի ամպլուային—սիրահարների և ֆատերի։

Ալիխանեան լինելով լաւ դերասան, չը պէտք է ցանկանայ ծափահարութիւններ կորզելու համար դուրս գալ բեմ այնպիսի դերերում, որոնք անհամապատասխան են նրա ոյժերին. հակառակ դէպքում նա միայն կը կորցնէ հասարակութեան համակրանքը և ակամայ կը ստիպէ մտածել, որ ինքը լուրջ դերասաններից չէ։ Ժողովուրդ թատրոնում բաւականին քիչ էր հաւաքվել։

Արշ. Առաքելեան

ՆԵՐՔՈՒՆ ԼՈՒՐԵՐ

—

Երկաթուղային ժանդարմերիայի հաղորդած տեղեկութիւնների համեմատ Ուլուխանլու-Զուլֆա նոր կառուցվող գծի վրա բանուորներից 57 հոգի հիւանդացել են խոլերայով, որոնցից մնռել են 31 հոգի, առողջացել են 7-ը և 19 ը դեռ հիւանդ են։

—

Թիֆլիսից հեռագրում են «Р. Сл.»-ին հոկտեմբերի 28 ից, որ Բօրչալուի գաւառում եղեցել է մի աւազակախումբ՝ բաղկացած տաժանակիր աշխատանքներից փախած 3 թուրքերից և 7 քիւրդերից։ Հրացանաձգութեան ժամանակ սպանվել է տեղացի բնակիչներից մի հայ՝ Մխոյեան անունով։ Ստրաժնիկները հետեւում են աւազակներին։

—

Անդրկովկասի երկաթուղու Սկրա կայարանից մեզ հաղորդում են, որ հոկտեմբերի լոյս 31-ի գիշերվայ ժամը 11-ի մօտերը ատրճանակի 2 գնդակով ծանր վիրաւորված է Փրիդօնեան եղբայրների կալուածների կառավարիչ ագրոնոմ Բալաբուշկան։ Գործը տեղի է ունեցել հետեւեալ հանգամանքներում։ Կառավարիչը նոր վերադարձած լինելով Գօրիից, նստել էր իր մի յարկանի տան սեղանատունը և սերտուկը հանած՝ թէյ էր խմում։ Զարագործը տան բակից, մի քիչ բանալով լուսամուտի փայտէ փեղկերը, տալիս է ատրճանակի առաջին հարուածը, որի գնդակը մտնում է նրա աջ թիակի մէջը։ Բալաբուշկան վեր է կենում, առանց զգալու թէ վիրաւորված է, դիմում է դէպի դուռը, բայց այդ ժամանակ լսվում է երկրորդ հարուածը, որի գնդակը մտնելով աջ կողքից, ելնում է մէջքի ողնաշարը։ Այդ չարագործութեան պատճառը հաստատվում է այն, որ Բալաբուշկան վերջերս արձակել էր իր մօտ աշխատող բանուորներից 3 հոգու, որոնց բռնել էր գողութեան մէջ։ Չարագործները փախել են և մինչև օրս դեռ չեն բռնվել։

—

«Нов. Вр.» լրագիրը հաղորդում է, որ հոկտեմբերի 26-ին Կառավարիչ Սենատի քրէական վճռաբեկ բաժնում՝ հրապարակային կամ դռնբաց նիստում քննվեց Սարատովի ուպրավայի նախկին անդամ տիտուլեարնի խորհրդական Ալէքսէյ Միլաշեվիչու բողոքը, որ վերջինս տուել էր Սարատովի դատաստանական պալատի վճռի դէմ։ Այդ վճռով պալատը պ. Միլաշեվսկուն ճանաչել էր մեղաւոր, որովհետև նա, իբր թէ, պատկանելիս է է եղել «սօցիալիս-յեղափոխական» կոչված գաղտնի կուսակցութեանը, որի նպատակն է փոխել Ռուսաստանում կառավարութեան եղանակը և որը ցոյց է տուել նշանները, որ իր այդ նպատակին հասնելու համար դիմելու է բռնի միջոցներին։ Երկրորդ—նա մեղադրվում էր ժողովրդին դէպի բացարձակ դիմադրութիւն ու անհնազանդութիւն կոչող շարադրութիւններ և կոչեր կազմելու ու տարածելու մէջ, որոնցով յանդգնաբար մերժում էր պետական օրէնքով արդէն հիմնված ծ վարչական ձեր։ Կառավարիչ Սենատը, լսելով օրեր-պրոկուրոր Տատիշչեվսկուն և պաշտպան՝ երդուեալ հաւատարմատար Կարապչեվսկուն, երկու ժամ խորհրդակցելուց յետոյ, որոշեց. բեկանել Սարատովի դատաստանական պալատի վճիռը, որով համարված է պ. Միլաշեվսկին իբր խախտող քրէական օրէնսդրութեան 797-դ յօդուածի, և գործի քննութիւնը յանձնել նոյն պալատին՝ միայն նոր կազմով։

—

«Кав.» լրագրին հեռագրում են. «Հոկտեմբերի 31 ի գիշերը փորձ եղաւ թալանելու Ալէքսանդրոպոլի պօստային գրատենեակի պահեստատունը։ Երեք չարամիտներ ձերբակալված են՝ զէնքերը և կոտրելու գործիքները հետները։»

—

Մեզ հաղորդում են, որ առաջիկայ շաբաթ երեկոյ, նոյեմբերի 6-ին, Հալաբարի Արաքսեանի նոր թատրոնում, Արմէնեան ամուսինների մասնակցութեամբ կը տրուի մի երկրորդ ներկայացում։ Կը խաղան Էդ. Բրանդէսի «Հիւր» 2 գործողութեամբ դրաման և երկրորդ անդամ «Համբոյր» ֆէէրիան Ր. դը Եանիելի։ Պ. Արմէնեան կատարանէ Պետրոս Դուրեանի «Տրտունջ» բանաստեղծութիւնը, դրամատիքական տեսարանի վերածված, ինչպէս նաև երկու յայտնի բանաստեղծութիւններ «Եղբայր ենք մենք» Մկրտիչ Պէշիքթաշլեանի և «Օ՜ն անդը յառաջ» հայր Ղևոնդ Ալիշանի։ Այդ երեկոյթը խոստանում է հետաքրքրական լինել։

—

Խարկովից հեռագրում են «Р. Сл.»ին հոկտեմբերի 28-ից. «Խարկովի զեմստվոյի ժողովը իր այսօրվայ նիստում մերժեց նահանգապետի առաջարկը մասնակցելու սպանված զօրականների զաւակների կրթութեան գործին։ Զեմստվոն անհնար է գտնում այդ նպատակի համար ժողովրդի հարկերն աւելացնել։ Իսկ դրա հակառակ, Օդեսայի դպրոցական շրջանի հոգաբարձուի այդ առիթով արած կոչին Խրիմի քաղաքները սրտագին արձագանք են տուել, որոշելով տեղաւորել զինուորների զաւակներին քաղաքային դպրոցներում, օֆիցէրներինը՝ միջնակարգ ուսումնարաններում, իսկ բարձրագոյններում եղածներին միմիայն նըպաստ հատցնել։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը միջնորդութիւն է յարուցել, որ պետական գանձարանից նպաստներ տրվեն այն զեմստվոներին, որոնք պատրաստականութիւն են յայտնել կրթելու սպանված զօրականների զաւակներին։ Մինիստրութիւնը մի յատուկ շրջաբերականով խոստովանվում է զեմստվոների աչքի ընկնող ծառայութիւնները ժողովրդի մէջ լուսաւորութիւն տարածելու գործում և յոյս է յայտնում, որ զեմստվոները եռանդուն մասնակցութիւն ցոյց կը տան ներկայ պատերազմում ընկած զօրականների զաւակների կրթութեան գործին։

—

ՇԻՐԱԿԻՑ (Կարսի գաւառ) մեզ գրում են. «Վերջապէս երկուշաբաթ շարունակ տեղացող անձրևներին յաջորդեց պարզ և լաւ եղանակ, խեղճ շինականները մոլորված և շլացած մնացել էին, շատերի դա՛ռ կալը կուտը կիսատ

էր ճացել, յուսահատութիւնը տիրել էր ամեն տեղ, վառելիքի համար աթոռը այս տարի բոլորովին անպէտք է դարձել, անձրևները թրջել, ոչնչացրել են. մի խօսքով ծանր դրութիւն ունեն։ Կենսական պիտոյքները բաւարար են. ցորենի սոմարը 18—19 ր. գարին սակաւ է, ալիւրի պուդը 1—10, 1—20, իւղը միայն, թանգ է 18 բուբլի պուդը, որ անսովոր և չը տեսնված բան է. հաւի հաւը 20 կ. վառիկը 15 կ. մսացու տաւարը և ոչխարը շատ էժան է, ամենալաւ միսը ֆունտը 8 կ., խոտի պուդը 20—23 կ., յարդը 10 կ. պուդը, 100 ձուն 1 ր. 20 կ.»։

ԱՐՏԱՔԻՆ ԾՏՍԻՐԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Պors-Արտուրի դրութիւնը։ «New-York Herald» լրագրի ասելով, Պօրտ Արտուրի դրութիւնը կրիտիքական է, բայց ոչ վտանգաւոր։ Չը նայելով ամենայուսահատ յարձակումների, եապօնացիները կարողացան գրաւել միայն մի քանի երկրորդական ամրութիւններ, որոնք գլխաւոր ամրոցներից դուրս են։ Եապօնական բանակի վերջին գործողութիւնների գլխաւոր նպատակն էր գրաւել այնպիսի դիրքեր, որտեղից կարելի լինէր հարուածել ռուսաց էսկադրան, որ կանգնած է Պօրտ-Արտուրի նաւահանգստում։ Եապօնացիները յոյս ունեն, այդպիսով, ստիպել ռուսաց նաւատորմը դուրս գալ նաւահանգստից։ Երբ նաւատորմը կոչնչանայ, եապօնացիները կը տեղաւորվին ձմեռային բնակութեան համար, թողնելով բերդի առաջ բաւականաչափ զօրախումբ պաշարումը շարունակելու։

«Indep. Belge» լրագիրը նոյնպէս հաստատում է, թէ վերջին շտուրմի անաջողութեան պատճառով, եապօնացիները մտադիր են յետաձգել բերդի առումը մինչև գարունը։ (Нов.)

Քենիչ յանձնաժողովը։ «Matin» լրագրի ասելով, անգլիական կառավարութիւնը առաջարկել է քենիչ յանձնաժողովի որոշման հետեւեալ խմբագրութիւնը.

1) Յանձնաժողովը բաղկացած կը լինի հինգ անդամներից, այն է—անգլիական մի օֆիցէր, մի ռուսական օֆիցէր, մի ամերիկական և մի ֆրանսիական։ Այդ չորս կոմիսարները կընտրեն հինգերորդը։ Եթէ նրանք անկարող կը լինեն համաձայնութեան գալ այդ կէտում, այն ժամանակ հինգերորդի ընտրութիւնը կը յանձնվի մի երկրի վեհապետի, որը կը նշանակվի ապագայում։

2) յանձնաժողովը քննութիւն կը կատարէ դժբախտութեան բոլոր հանգամանքների մասին և կորոշէ պատասխանատուութիւնը. յանձնաժողովը կունենայ բոլոր լիազօրութիւնները՝ դատավարութեան բոլոր հարցերի լուծման համար։

3) Կողմերը պարտաւորվում են ներկայացնել յանձնաժողովին բոլոր բացատրութիւնները, տեղեկութիւններ։

4) Յանձնաժողովը կը գումարվի Պարիզում որքան կարելի է, շուտ անմիջապէս համաձայնութիւնը ստորագրելուց յետոյ։

5. Յանձնաժողովի զեկուցումը պաշտօնապէս կը հաղորդվի հատապատասխան կառավարութիւններին։

Այդ հիմնական կէտերին կաւելացվին լրացուցիչ յօդուածներ գործակալների, ծախքերի, ձայնատուութեան և այլոց մասին։ Ենթադրում են, որ յանձնաժողովը կըսկսէ իր նիստերը երկու շաբթից յետոյ։ Անգլիական կառավարութիւնը իր կողմից աւարտել է այդ գործի քննութիւնը։ Քննիչի եզրակացութիւնները հաստատում են միայն անգլիական ձրկնորսների ցուցմունքները։

Նոյն լրագրի Պետերբուրգի թղթակիցը հաղորդում է, որ բալտիական էսկադրային հրամանագրված է ինն հանգոյցից աւելի չընթանալ և որ մարտից առաջ նա չէ կարող հասնել Պօրտ-Արտուր։ Արդեօք մինչև այդ օր բերդը կը դիմանա։ Յայտնի է միայն այն, որ նորերս մարշալ Օյեաման առաջարկեց Ստեսսելին ամբողջ պահակազօրքին ազատ թողնել անցնելու մինչև Կուրօպատկինի բանակը, բերդը յանձնելու պայմանով, բայց բերդի պաշտպանները կտրական կերպով մերժեցին, նախամեծար համարելով մեռնել, քան անձնատուր լինել։ (Нов.)

Եապօնացիների ծրագիրը։ «Echo de Paris» թերթի Պետերբուրգի թղթակիցը հաղորդում է, որ ռուսական կառավարութիւնը կը ներկայացնէ քննիչ յանձնաժողովին զանազան փաստաթուղթեր, որոնց նպատակն է ապացուցանել, թէ եապօնացիները, յիրաւի, պատրաստվում էին պայթեցնել ռուսաց էսկադրան։ Դրան իբր ապացոյց ծառայում են—Բերլինի դիպլոմատական գործակալի ծածկագիր հեռագիրը՝ Հաագայի եապօնական գործակալին, որը աջողվել է բռնել (նրա մէջ կան մանրամասնութիւններ ենթադրեալ փորձի մասին), վկաների ցուցմունքները այն մասին, թէ պատերազմի սկզբում Եապօնիան գնել է Անգլիայում վեց հակա-ականաւոր, որոնք յայտնի չէ ինչ են եղել։ Ապա նրանց տեսել են Նորվեգիական Ֆիօրդներում, իսկ Հուլլի միջադէպից մի քիչ առաջ նրանք ածուխ են վերցրել մի նաւից։ Դրան վերաբերում են նաև ռուսաց դիպլոմատների առաջադրութիւնները, որոնք արվել են Անգլիայի, Դանիայի, Նորվեգիայի և Գերմանիայի կառավարութիւններին եապօնական ինտրիգների առիթով, ծովապետ Բոժեստվենսկու զեկուցագիրը, ակադեմ.-օֆիցէրների ցուցմունքները և այլն։ (Н.)

Ծովապետ Տոգօ։ Զիֆուից հեռագրում են «Daily Teleg.»-ին. լրագրին, թէ ծովապետ Տոգօն սաստկացրել է իր էսկադրան և ամենաարթուն կերպով հսկում է Պօրտ-Արտուրի մուտքի վրա։ Նա երկիւղ է կրում, թէ չը լինի ռուսական էսկադրան պատռելով գիծը, փախչէ մինչև մի որ և է չեզոք նաւահանգիստ։ Եապօնական ծովապետը համարում է ռուսաց էսկադրայի այժմեան պետին շատ ձեռներէց ծովագնաց։ (Нов.)

Սկուտարի կուսակցութիւնը։ Կոմս Օկումայի կուսակցութեան քաղաքական կոմիտէտը նոյեմբերի 2-ին (ն. տ.) որոշեց, թէ Ռուսաստանի հետ հաշտութիւն կնքելիս կարելի կը լինի ներկայացնել հետեւեալ պայմանները, 1) Մանջուրիան պէտք է վերադարձվի Չինաստանին. 2) Ռուսական բոլոր կոնցեսիաները Մանջուրիայում անցնում են Եապոնիային. 3) Ռուսական երկաթուղիները Մանջուրիայում անցնում են Եապոնիային։ (Нов.)

Պors-Արտուրի մասին։ «Allgemeine Zeitung» լրագիրը հաղորդում է, որ եապօնական կառավարութիւնը գեներալ Նոգիին տուել է ամենաընդարձակ լիազօրութիւններ գեներալ Ստէսսելի հետ բանակցելու համար (P. Сл.)

ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԸ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԾՈՑՈՒՄ

—

«Journal des Dèbats» լրագրի թղթակիցը հաղորդում է, որ անգլիացիների գործունէութիւնը օրէց օր ամրանում է Կենտրօնական Ասիայում և մանաւանդ եռանդում դարձաւ տրանսվաալեան պատերազմի վերջանալուց յետոյ և ռուս-եապոնական պատերազմի ժամանակ։

Անգլիացիները գործում են այժմ միանգամից Պարսկաստանում, Աւղանստանում և Պարսկական ծոցում։ Նորերս յայտնի դարձաւ, որ Թէհրանի անգլիական դեսպան սրը Արտուր Հարդինգ քննութիւն կատարեց հիւսիսային և հարաւային Պարսկաստանի նահանգներում անգլիական առևտուրը ոչնտեղ բարձրացնելու նպատակով, որը սկսել էր, ըստ երևոյթին, ընկնել և այդ հանգամանքը ստիպեց անգլիական կառավարութեան նոր հիւպատոսութիւններ հիմնել Թաւրիզում և Ուրմիում։ Համարեա մի և նոյն ժամանակ Հնդկաստանում իմացան, որ աւղանեան էմիր Հաբիբուլլան քայլեր է արել բարեկամանալու Հնդկաստանի կառավարութեան հետ և որ այդ առիթով բանակցութիւններ էին սկսվել Կալկուտտայում։ Աւղանական էմիրի արած առաջարկները մեծ ուրախութեամբ ընդունեցին անգլիացիները, և բանակցութիւնները, որոնք այժմ վարվում են արդէն Կաբուլում, ի հարկէ այն հետևանքը կունենան, որ կը կազմակերպվի Հնդկաստանի փոխարքայի աւելի կամ պակաս դիմակաւորված խնամակալութիւն աւղանական էմիրի վրա։

Անգլիացիները վերջերս էլի մի յաղթութիւն տարան. Կուէյթոում սրանից յետոյ կը նստի անգլիական ըէզիդէնտը. Ծերունի շէյխ-Մուբարէքը, որը այնպէս յամառութեամբ հրաժարվում էր ընդունելու լորդ Կէրզօնի ուղարկած մարդկանց, այժմ զիջեց Հնդկաստանի փոխարքայի պահանջներին, և գլխաւորապէս, իր որդու՝ Զէբարի պահանջներին, որը Պարսկական ծոցում անգլիական ազդեցութեան տարածման ամենաջերմ կողմնակիցներից մէկն է։ Այդպիսով լորդ Կէրզօն հասաւ իր նպատակին, այն է տարածել Անգլիայի ազդեցութիւնը Հնդկաստանը շրջապատող բոլոր երկիրների վրա, և այժմ Հնդկաստանի կառավարութեան գերակշիռ ազդեցութիւնը այդ երկիրներում ամուր հիմքերի վրա է դրված։ Այժմ չէ կարելի կասկածել,—ասում է թղթակիցը,—որ նախ քան Բաղդադի երկաթուղին աւարտելը, Անգլիան ամուր կերպով կը հաստատէ իր գերակշիռ ազդեցութիւնը Պարսկական ծոցի վրա։

Անգլիան այժմ արդէն կատարելապէս հաւատացած է, որ այդ երկաթուղին ամենանշանաւոր շահեր կը բերէ իրան։ Նրանք, որոնք կարծում էին այդ երկաթուղով հարուած հասցնել Սուէզի ջրանցքին, խիստ սխալվեցին։ Փոխանակ անգլիական առևտրին և նաւագնացութեանը վնաս հասցնելու, Բաղդադի երկաթուղին Ասիայում երևի Անգլիայի տնտեսական բարգաւաճման և քաղաքական գերակշռութեան նոր ֆակտոր կը դառնայ։ Հրաժարվելով իրանց դրամագլուխներով օգնելու այդ ճանապարհի կառուցմանը, Անգլիան ցոյց տուեց, որ նա գիտէ անվնաս դարձնել այն, ինչ բանին, որ չէ կարող խանգարել ինքը, բայց որ նա գիտէ շատ լաւ օգուտներ հանել մինչև անգամ այն զէնքից, որով նրան սպառնում են։ Զարմանալ միայն կարելի է անգլիական քաղաքականութեան հաշիւների խորութեան և նրա արտասովոր ընդունակութեան վրա յամառութեամբ ի կատար ածել նրանց։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Բելգրադից հեռագրում են Վիէննայի լրագիրներին, որ հոկտեմբերի 27-ին այնտեղ կայացել է մակեդոնական սերբերի ներկայացուցիչների ժողով։ Այդ ժողովի քննութեան առարկան եղել է Մակեդոնիայում վարվող եղբայրասպան կռիւը բուլգարների հետ վերջացնելու հարցը։

—Անգլիական «Standard» լրագիրը ծախվել է 700,000 ֆունտ ստերլինգով (7 միլիոն բուբլի)։ Գնողն է Պիրսօնը։

«ՄԵԱԳԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՍ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԵՐԻՑ

1 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ-ադիւտանտ Կուրոպատկինի ամենահպատակ հեռագիրները Նորին Կայսերական Մեծութեան Անունով. 1) 1904 թւի հոկտեմբերի 31-ից. «Հոկտեմբերի 29-ի լուսաբացից առաջ՝ կամաւորների կօմանդան, պօրուչիկ Վօդեցկու հրամանատարութեամբ, խուզարկութիւն արեց թշնամու գտնված վայրերում, Խուանմիցան գիւղի ուղղութեամբ, Բանիւզայից 2 վերստ դէպի արևելք։ Այդ գիւղում պատահած 8 եապօնացի ձիաւոր դրագօնները փախան։ Խուանմիցանից հարաւ-արևելք կամաւորները յայտնագործեցին երկու շարք խրամատներ, որ բռնել էր թշնամու մի վաշտ։ Կրակ անելով և կօմանդայի մի ժամն ուղարկելով թշնամու թիկնակողմը, պօրուչիկ Վիտեցկին թշնամուն դուրս քշեց դիրքերից և ինքը գրաւեց խրամատները։ Թշնամու գլխաւոր դիրքի շրջանում ահակոչը հնչեց և մէկ բատալիոն արագ շարժվեց դէպի կամաւորների գրաւած խրամատները։ Եապօնական առաջնութաց 2 վաշտերը, հանդիպելով մերոնց միահատուն կրակին, յետ դարձան, տանելով վիրաւորներին և սպանվածներին. միւս երկու վաշտերը շրջելով անցան բլուրների ետևը։ Կամաւորների կօմանդան, տանելով իր հետ մի սպանված և մի ծանր վիրաւոր, չորս թեթև վիրաւորներ շարքերում, նահանջեց դէպի մեր դիրքերը։ Հոկտեմբերի 30-ին մենք և թշնամին թեթև թնդանօթաձգութիւն էինք անում բոլոր ճակատի երկարութեամբ։ Թշնամու հետ պատերազմական ընդհարումների մասին զեկուցումներ չեն եղել»։ 2) Հոկտեմբերի 31-ին. «Հոկտեմբերի լոյս 31-ի գիշերը խաղաղ անցաւ։ Զեկուցումներ չեն եղել պատերազմական ընդհարումների մասին»։

2 Նոյեմբերի

ԻՐԿՈՒՏՍԿ։ Պետերբուրգ մեկնեց Կարմիր Խաչի լիազօր իշխան Վասիլչիկովը։

ԿՈՒՐՕՊԱՏԿԻՆԻ ԳԼԽԱՒՈՐ ԲԱՆԱԿԻՑ. (Ռէյտէր)։ Ամենայն օր յաճախակի ընդհարումներ են լինում պահապան պահակների միջև։ Ռուսներն իրանց խոշորաբերան թնդանօթներովը և 6 դիւյմանոց բատարէաներովը գնդակոծում են եապօնացիներին իրանց խրամատներում, հանգիստ չը տալով։ Դալիս են բազմաթիւ օֆիցէրներ, պակասը լրացնելու։ Բանակն այժմ աւելի քան երբևէ գիտակցում է իրան բաժին ընկած ահագին խնդիրը։ Բանակը մեծ յոյսեր է տածում Բալտիական նաւատորմի վիրաւորների վրա։ Զօրքերի անընդհատութիւնն աւելի լաւ է, քան պատերազմի միւս ժամանակներումը։ Ճանապարհները լաւ վիճակի են։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ, 1 Նոյեմբերի։ Ռուսական օժանդակ «Կուբան» կրէյսէրն անցկացաւ մեծ Բէլտով, դիմելով դէպի հիւսիս։

ՄՕՍԿՎԱ։ Նոյեմբերի 1-ին Մոսկվայով անցաւ 20 հոգուց բաղկացած մի խումբ եապօնական զինուորներ, մէկ օֆիցէր, կօրէացի և չինացի լրտեսներ։ Խմբում գտնվում են մի եապօնացի կին և ընկղմած փոխադրող «Իձումզմարու» նաւի մէկ օֆիցէր, որի վրա նա, նաւի ընկղման ժամանակ, այրեց նաւային թղթերը, իսկ յետոյ իր ստացած այրվածքներից բժշկվում էր Վլադիվոստոկում։ Կօրէացիների մէջն է գտնվում գեներալ Միշչենկոի զօրաբաժնում եղած ռուսահպատակ և պրավոսլաւնի թարգմանը, չինացիների մէջն է պատերազմից առաջ Շանգհայգուանում երկաթուղային արհեստանոցների թարգմանը. ինժենէր Բրանեվսկու օրով, իսկ յետոյ Մուկդէնում։

ՊԱՐԻԶ, 1 Նոյեմբերի (Հավաս)։ Տիկին Նելիդօվան ծովապետ Բոժեստվենսկուց ստացաւ հետեւեալ հեռագիրը. «Լողացող փառահեղ հիւանդանոց «Օրեօլը» միացաւ էսկադրային։ 12,000 ռուս սրտեր զմայլվում են նրանով և ինձ հետ միասին ջերմագին շնորհակալութիւն յայտնում մեծ Ֆրանսիային»։

ԲԱԴԷՆԲԱԴԷՆ։ Քաղաքային խորհրդի որոշմամբ վճռված է Շիլլէր-շարասսէի փողոցի տան պատին կպցնել մի յուշատախտակ հետեւեալ մակագրութիւնով. «Այս տան մէջ ապրում էր Տուրգենեվը 1863-ից մինչև 1868-ը»։

ԽԱՐԿՕՎ։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը այցելեց գպրոցական հաստատութիւնները։ Մինիստրի այցելութեան հաւանական հետևանքը կը լինի մի նոր բէալական դպրոցի բացումը։

2 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ-մայոր Մարտսօնը բարձրացվել է գեներալ-լէյտէնանտի աստիճանի, նշանակվելով երրորդ մանջուրական բանակի պատերազմական շտաբի գլխաւոր. գեներալ-մայոր Ալէքսէեվը նշանակված է երրորդ մանջուրական բանակի գլխաւոր կվարտիրմայստէր։

ԲԵԼԳՐԱԴ։ Մաղթանքից յետոյ սկուպշչինան հաւաքվեց։ Նախագահ ընտրվեց Ստանոյեվիչը իսկ Նիկոլիչը և Պետրոգանովիչը՝ փոխնախագահներ։ Զորեքշաբթի օրը թագաւորը կը բանայ սկուպշչինան գահական ճառով։

ԱԹԷՆՔ։ Թագաւորը վերադարձաւ։

ՀԱՒՕՄ։ Պապը ցաւակցութիւն յայտնեց Հեռաւոր Արևելքի պատերազմի առիթով և ասաց, որ աղօթում է Աստծուն, որ պատերազմը շուտով դադարի։

ԵՐԵՒԱՆ։ Քաղաքի գլխաւոր փողոցում, ահագին թւով անցորդների աչքի առաջ, երկու չաբաժիտների խէնջարների հարուածներովն սպանված են տեղական առևտրական Բօմաս Էդէլսօնը և իր կինը։ Զարագործներից մէկը բռնված է և երևում է, որ հայ է։

ԼՕՆԴՕՆ։ Եապօնական վեց տոկոսանոց նոր փոխառութեան աջողութիւնը համարվում է բոլորովին ապահով։

ԴԱՁՇԱՊՈՒ։ (Ռէյտէր)։ Նոյեմբերի 1-ին Սկրիդլովը այցելեց բարոն Մէյէնդորֆին և զննեց հետեւակազօրի առաջին կօրպուսը։ Դիրքերի վրա լիակատար խաղաղութիւն է տիրում։ Առանց թնդանօթաձգութեան մինչև անգամ տաղտկալի է լինում։

ԼՕՆԴՕՆ, 2 Նոյեմբերի։ (Ռէյտէր)։ «Ռէյտէրի գործակալութեան» թղթակիցը հեռագրում է, որ հոկտեմբերի 17-ին եապօնացիները ընդհանուր յարձակումն գործեցին Պօրտ-Արտուրի արևելեան ամրութիւնների գծի վրա և հասան գլխաւոր ժարտկոցների խրամատներին, որոնք աւելի խոր և աւելի լայն դուրս եկան, քան թէ կարծում էին։ Երևաց, որ ժարտկոցներն ևս աւելի զօրեղ են, քան ենթադրում էին եապօնացիները։ Ստորերկրեայ յամառ կռիւ յետոյ գրաւվեցին ականային ուղիները, որոնք գտնվում են Ցզինգուանշանից դէպի հիւսիս։ Ռուսները դեռ ևս իրանց ձեռքում են պահում բերդի ճակատի մի մասը։ Եապօնացիները զբաղված են ականներ փորելով՝ որպէս զի դուրս քշեն ռուսներին։ Եապօնացիների կորուստները հաշվում են 1,500 հոգի։

ՄՈՒԿԴԷՆ, 1 Նոյեմբերի։ Դիրքերի վրա առաջվայ նման խաղաղութիւն է տիրում։ Թնդանօթաձգութիւնը դադարեց։ Երէկ երեկոյեան եապօնացիները դիրքերի վրա տեղաւորեցին պաշարման շատ թնդանօթներ։ Սկրիդլով դիրքերից վերադարձաւ Մուկդէն։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒԿԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՄԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ԲԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆԻ
(Գուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ընդունում է բացի կիրակի օրերից։

ԸՆԱԻՕՏՆԵՐԸ

ՀԻԿՕՎՔԱՆԻ—9—10 ժ. առաւ., ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մոլթու, վեներական և իրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և ներքին հ.
Գ. Ի. ԳՐԻԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Գ. ԱՐՄԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԱՐԱՇԵՏՅԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ՕԼՕՎ ատամնաբոյժ. 9—11 ժ.
ԿՈՆԻԺԵՎ ՀՍՐԻՒՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձուհի և կանանց հ.։

ԵՐԵԿՈՅՆԵՐԸ

Ա. Ի. ԹՈՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.
Գ. Ա. ԱՐԴԱՋԻԵՆԻ. Կատարում է միկրո-քիմիական և բակտերիոլոգնական հետազօտութիւններ։
Ս. Ա. ՍՈՎԱՆԻՍՅԱՆ—ատամ. ծաղկատան և բժշկական մանրմնադրդ. գիմել 11—1 ժ.։
Վճարը 50 կ. հաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցում ընդունվում են և գիշերութիւն հիւանդներ։
Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի.

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Ընդունում է մանաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներ ամենայն օր 12—2 առաւօտ. և 5—6 երեկ.
Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանովի—դեղատան կից։ (Չ. շ.) 10—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆՑ
Ընդունում է հիւանդներ (բժշկութիւն, պլօմբ և արհեստական ատամներ շինել)։
Առաւօտեան 9—2
Երեկոյեան 4—7
Վանքի Մեծ փող. տուն Մարտիրոսեանի։
(Կ. Չ.) 19—100

ԲԺՇԿ. ՄԻՆԱՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախ՝ ortopédisor Մոսկվայի Համալսարանի կլինիկայի ընդունում է հիւանդներին՝
ՄԻԶԱՍԵՌԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՍԻ և ՄՈՐԹՈՒ
հիւանդութիւններով ամեն օր 10—11 ժ. առաւօտեան և 6—8 ժ. երեկոյեան։ Հասցէն Բարիշչևսկի փողոց, տուն № 1 «Պաժարնի կօմանդի» գիմաց, տելեֆոն 711.
(Ա. օ.) «—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Գր. Տեր-Գրիգորեանց
ընդունում է հիւանդներին—ներքին (մասնաւորապէս կրծքի) և երեխայոց հիւանդութիւններ. ունի բենզինեան կաբինէտ. 154. Միրզայեան պրոսպէկտ, տելեֆոն 825.
(Չ. Ե. Հ. Չ.) 98—105

ԲԺՇԿԱՊԵՏ
Բժշկ. Բ. Նաւասարդեան
տեղափոխվելով Թիֆլիսից ՐՕՍՏՕՎ
Հիւանդներին ընդունում է 11—12 ժ. առ. և 7—8 ժ. երեկոյեան։
Б. Садовая, 136, д. Бакалова.
(Ո. Կ. Ե. Հ.) 51—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԷՐԴԵԱՆ
Մասնագէտ վիզային և սիֆիլիսիքական հիւանդութիւնների,—ընդունում է հիւանդներին առաւօտեան 12 ժ.—1 ժ. երեկոյեան՝ 6. ժ.—9 ժ.։ Կուկիա, Սեմեօնովսկայա փ. № 20.
(Ո. Կ. Ե։) 21—30

Լոյս տեսաւ և ի ցոյց է դրված կենտրոնական գրավաճառանոցում
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ
Իւղաներկ սիմադիր (96×68°) պատկերը, տպված Լայպցիգի Պինկաու նշանաւոր գործարանում 14 գոյնով։
Հրատ. Նիւտ ա. ք. Աղանեանի
Գինն է առանց ճանապարհածախսի 3 ր.
—
Մին։ն պատկերների ստացվելը բացված է բաժանորդագրութիւն։ Ցանկացողները այժմէն վճարում են 1 բուբլի, մնացեալը պատկերը ստանալիս։ Չ. ո. 7—10

Լոյս տեսաւ
ՌԱՓԱՅԷԼ, ՊԱՏԿԱՆԵԱՆԻ
ԵՐԿԵՐԻ III ՀԱՏՈՐԸ
Գինն է 1 բուբլի։
Ծախվում է Կովկասի բոլոր հայ գրավաճառների մօտ։ Պահեստը՝ Նոր-Նախիջևանում, Մինաս Բեբբերեանի մօտ։ 3—5

ԿԱՐԱՍԻՆԵՐ

Ծախվում է «Modern» ոճով շինված—բուֆէտ, գրքերի պահարաններ, էտաժէրկաներ, փոքր պահարաններ, սեղաններ, նստարաններ, սեղանատան աթոռներ և այլն, նոյնպէս և ընդունվում են ամբողջ սենեակների կամ կաբինետների պատուէրներ։
Իւնկերների դրպրոցի դիմաց **Կարլ Ֆրանկէ** Հեռ. № 301
(Չ. Կ. Չ.) 1—3

ՐԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԵՈՐԳ-ԲԼԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամը 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինովսկայա փողոց № 8։ (Ե.Ո.) 35—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. Յ. ՔԱԹԱՆԵԱՆ
Վերակսեց ընդունելութիւնը.—ներքին և զարային հիւանդութիւններ։ Ամեն օր 9—11 ժ. առաւօտ և 5—7 ժ. երեկոյեան։
Վելիամինովսկայա փողոց, № 13. տ. Մաքարովի։ (Ե. Հ. Կ.) 19—20

Ներքին և երեխայոց հիւանդութիւնների
ԲԺԻՇԿ ԱՂԼԻՍԱՆԴՐ ՂԱԶԱՐԵԱՆՑԸ
Ընդունում է ամեն օր՝ առաւօտեան ժամը 9-ից մինչև 11 ը, երեկոյեան 5-ից մինչև 7 ը։ Սօլօլակ, Ռաիշչևսկի փողոց, տուն Գիրգիտեանի № 30, տելեֆոն № 847. (Կ.Ե.Հ.Չ.) 9—15

ԵՐԴՈՒԵԱԼ ՀԱԽԱՏԱՐՄԱՏԱՐ
Ս. Ս. Աֆանասեանը
Գանձակից մշտապէս տեղափոխվել է բնակվում է Թիֆլիսում Վօզնեսենսկի փողոց Գալամքարովի տուն № 9. (Ա.օ.) 26—30

ԳԻՏԵՆԱԼՈՎ
Ռուսերէն, հայերէն և վրացերէն լեզուների վարժ կարդալը և խօսալը, փնտրում եմ ծառայատեղ, ամենաձեռնտու պայմաններով, բանկերում, գրասենեակներում, գործարանների կօնտօրաներում—այլ և այլ պաշտօններով։ Ընդունում եմ նմանապէս և արտագրութիւններ, ռուսերէն և հայերէն լեզուներով։ Հասցէս. Тифлисъ, Іорская № 7. М. А. 3—3

Լոյս տեսաւ
Տ. ԵԺԻ
ԼՈՒՍԱԴԻՄԻՆ
Վէպ, երկրորդ տպագր.. գինն է 1 բուբլի։
Դիմել՝ Баку, Книжный маг. С. Д. Арутюнова. (Ա. օ.) 14—25

Գուտտենբերգ
գրավաճառանոցում վաճառվում է.
Գ. ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ
«ՆԿԱՐՉԻ ԿԵԱՆՔԻՑ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ»
գիրքը,
տպագրված լաւ թղթի վրա, 90 երես.
Գինն է 35 կ., պօստի ծախքով 50 կ.
Գաւառացի զնողները հեշտութեան համար կարող են 50 կ. պօստի մարկաներ ուղարկել։
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ» Дворцовая, Г. Галустяну. 3—5

Զգուշացէք կեղծուածներից.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՈՆ
Գ. Ֆ. ԻԻՐԳԷՆՍ
Ոչնչացնում է պեպէնները, սեւութիւնը, դեղին բծերը, պուղիկները և պտուկները և ներգործում է աւելորդ քրտնելու դէմ։ Խորհուրդ է տրվում ձեռք բերել, որպէս տուալէտային անուշահոտ սապօն, բարձր արժանաւորութեան։
ՈՍԿԷ ՄԷԴԱԼ 1893 թվի համար։
Կտորի գինը 50 կ., ½ կտորի 30 կ.։
Ծախվում է բոլոր ամենալաւ դեղագործական մագազիններում և դեղատներում։
Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Իւրգէնսի մօտ Մոսկվայում։ Դէպօ, Թիֆլիսում, Ագմուրովի մօտ, դեղագործական ապրանքների առևտրի կովկասեան ընկերութեան մէջ, Ծուբինովի և Գրիշչակի, պ.պ. Պոպովների և Արիստակովի մօտ։ (1, 15) 20—24

Մի կին տալիս է որդեգիր երկու տարեկան գեղեցիկ աղջիկ երեխայ և խնդրում է բարի մարդկանց ընդունել այն պատճառով, որ խեղճ են և մայրը տկար է։ Հասցէն Վօզնեսենսկայա փող. Տերասնի պերեուլ. № 73. տ. Խոյիբովի, ընակ. Վարդանեանի։
(Չ. ու. Կ.) 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Զեռնարկութիւն Կայսերական Թատրոնների արտիստ Լ. Դ. Դօնսկոյի
Այսօր, չորեքշաբթի, նոյեմբերի 3 ին վրաց դրամատիկական ընկերութեան ներկայացում.
Կը ներկայացվի
«ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ»
դրամա 5 գործ. հեղ. իշխ. Սումբատովի։
Սկիզբը երեկոյեան ժամը 8 ին։
Վաղը, հինգշաբթի, նոյեմբերի 4 ին ժամանակագրութեամբ Դօնսկոյի, կը ներկայացվի ՆԵՐՕՆ, օպեր. 4 գործ. և 6 պատկ. երաժ. Մուբինշտէյնի։ Ուրբաթ նոյեմբերի 5 ին Թիֆլիսի 2 դ գիմնազիայի չքաւոր ուսանողների օգտին կը ներկայացվի ՊԻԿՈՎԱՅԱ ԴԱՄԱ, երաժշտ. Չայկովսկու։
Պատրաստում են ներկայացնելու մանակցութեամբ Լ. Դ. Դօնսկոյի ՖԵՆԵԼԼԻ, օպեր. 1 գործ. երաժ. Օբէրի։
1—1 Կառավարիչ՝ Ի. Ա. Կէլլէր

Լոյս տեսաւ
Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ
ԼՈՒՈՒԹԻՒՆԸ
(Վէպ)
Գինն է 60 կոպ.
Շուտով լոյս կը տեսնի «Պատկերներ» Բ. հրատ.
Դիմել՝ Թիֆլիսի հայ գրավաճառներին և հեղինակին՝ Редакція „Мурчъ“, Тифлисъ.

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
№ 1 ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊԵԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒՆ № 1
ԼԷՕ
Ս. ՄԵՍՐՈՊ
Հրատարակութիւն Ա. Պողոսեանի
Էջ 336
Գինն է 75 կոպ. (2 ֆր.) ճանապարհած. 1 ր. (2 ֆր. 50 սանտ.)։
Վերադիր վճարով ստանալու համար ուղարկելու է 25 կոպ. նամակագրոշմ։
Կարելի է ստանալ՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրավաճառանոցից և Մոսկվա, Արսեն սարկաւագ Սիմեօնեանից։
(Армянскій пер., домъ армянской церкви)
5—10

Լոյս տեսաւ
ԱՐԱԲԻ
ՍՐԲԱԶԱՆ ԺԱՄԵՐ
(Բանաստեղծութիւններ)
Գինը՝ 20 կոպ.
Ծախվում է նոյն հեղինակի
ԳԵՐԲԱՆԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ
Պոէման
Գինը՝ 20 կոպ.
Հասցէն՝ Тифлисъ, Ртищевская 7а, Арташесу Абалянцъ կամ Книжный магазинъ «Гуттенбергъ». Ե. Հ. Չ. Կ. 4—6

ՎԱՐԺԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՈՆ
Յ. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ
(XIV-րդ տարին իր գոյութեան)
Ընդունում եմ աշակերտներ՝ իբրև գիշերօթիկներ, ցերեկօթիկներ և երթևեկներ բոլոր պետական միջնակարգ դպրոցները մտնելու համար։ Ընդունվում են նաև՝ բոլոր գիմնազիաների, բեալական, վաճառականական և ուրիշ դպրոցների ստորին դասատանի աշակերտները իրանց տուած դասերը վերակրկնելով հանդերձ (съ репетиціей)։ Վարժարանում աւանդվում են՝ կրօն, հայոց լեզու, ֆրանսերէն, գերմաներէն և անգլիերէն լեզուներ նաև, իսկ առաջին նախակրթարանում՝ հայոց կրօնին կից՝ բարոյախօսութիւն մանուկների համար։ Գաւառական քաղաքների և գիւղերի նորեկ աշակերտների համար, որոնք գիշերօթիկ գոլով՝ կամենում են պետական միջնակարգ դպրոցները մտնել՝ հատուկ իրանց ընդունակութիւնների ու ժամանակ կանոնաւոր զարգացման, վարժարանը բոլոր կարելոյն, առաւել բնական հանգամանքների սէջ է գտնվում, թէ առողջապահական և թէ այլ հակամանկավարժական անպատատ երևոյթների վերաբերմամբ, քան պատահական խորթ մանաւոր շրջաններում, որոնց շնորհիւ մեր նոր սերունդը կարող են այլասերվել և ծուռ ընթացք ստանալ՝ իբրև փափուկ էակներ։ Դպրոցում աւանդվում են դասեր հմուտ ուսուցիչներ և ուսուցչուհիներ։ Վարձը չափաւոր է։
Հասցէն. Тифлисъ, Авлабаръ, Архангельская ул. д. № 32.
3—5 (Ո. Կ. Հ. Շ. Ե.) Վարժարանի կառավարիչ՝ Յ. Ղարագեօզեան

Ֆիրման արժանացել է զանազան ցուցահանդէսներում տասն և չորս բրօնզեայ և արծաթեայ մէդալների և Կովկասեան յօբելեանական ցուցահանդէսում ոսկեայ մէդալի։
Աֆրիկեանի ընդարձակ պտղաբուծական այգում
ընդունվում են պատուէրներ պատուաստած պտղատու ծառերի փորձված ամենաարդիւնաբեր տեսակներից։ Նոյն այգում ծախվում են մեծ քանակութեամբ ծառատունկեր վայրի ծառերի սերմից ցանած և շթիլ արած պատուաստվելու համար։
Դիմել Գօրի, Կ. Աֆրիկեանին։ Ծառայցուցակներն ուղարկվում են ձրի։
(Հ. Շ. Ե.) 3—4

Գ. Ե. Օսիպովի ֆիրմայի և սեփական այգիներից ստացված բնական կախէթի գինիների մեծ պահեստի տիրոջ մահվան պատճառով,
Գ. Ե. ՕՍԻՊՕՎԻ
ժառանգների գինու վաճառանոցում, որ գտնվում է Սեօնի և Հէրակլի փողոցների անկիւնում, իր սեփական տանը, բոլոր տեսակի գինիների գինը զգալի կերպով նուազեցված են։ Իսկական Կախէթիայի գինիների շիշը կարելի է ստանալ 15 կ. մինչև 1 բուբլի գնով։ Առևտրական տունը գոյութիւն ունի 1878 թվից։ Ո. Կ. Չ. 7—10

Բանկային գրասենեակ Ա. Փրիդոնեան եւ ընկ.
Ապահովացման համար երրորդ կարգի վիճակախաղի տոմսերը առ 1 ն նոյեմբերի 1904 ամի վերցնվում է 2 ր. 40 կոպ. ամեն մի տոմսի համար առանց մարկաների։
Ապահովացումն հեռագրով և վերադիր վճարով գրասենեակը չէ ընդունում։
(Չ. Հ. ու.) 3—4

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՌԵՒՏՐԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Երկու սեռի անձանց համար
(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова)
Կուրսերի նպատակն է տալ ուսանողներին մասնագիտական, եւ առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։ Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համբիչի վրա. 2) Հաշուապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Դեղագրութիւն և արագագրութիւն (ուղղագիր ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։ Ուսումն սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը։
Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ), և մանրամասն ծրագիրը (программа)—տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (Չ. Կ.) 30—30

Բագուայ բաժանմունքում
«Պարապետի վրա»
Եղբայրք ՄԷԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՑՆԵՐԻ
խանութում ստացվում է շարունակ մեծ քանակութեամբ ձմեռվայ տաք ֆուֆայկաներ. չուլիներ, ճասկիներ, երեխայի հագուստներ. նոյնպէս ստացվում է գլխի աբրեշումէ ալուխներ, չիլաներ, չիլի հաշիաներ և զանազան տեսակ գալանտերէյնի ապրանքներ։ Դրսի պատուէրները կատարվում են անմիջապէս։
(Կ. Չ.) 14—30

Дозволено цензурою. Тифлисъ, 2 го ноября 1904 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ. Типогр. Т—ва С. Назарянца и К. п. ф. «ГЕРМЕСЪ». Мад. ул. № 15